

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

Ն Ի Ս Տ Է.

28 ՅՈՒՆԻՍ 1913

ՆԱԽԱԳԱՀ.— ԱՄԵՆ. Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ.— ՏՕՔԹ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖ.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Քննութիւն հիմնական նախագծի՝ կանոնագրի երուսաղէմի Ա. Յա-կոբեանց վանուց.
2. Ընտրութիւն կրօնական ժողովոյ,
3. Տեղեկագիր Ասենապետաց Դիւանի, ի մասին Թրքահայոց կողմէ ա-մենայն Հայոց հայրապետին մատուցանելի գրին,
4. Տեղեկագիր Խորհրդարանական Յանձնաժողովոյ ի մասին հանգու-ցեալ Երեցեան Ա.ի ամբաստանութեանց:
5. Հարցապնդում ի մասին Գաբամանեան ԷՖ ի սպանութեան:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՒԼՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհր-դարանի մէջ և ժամը 3.15ին, առեանը լաց-ուեցաւ ի ներկայութեան 45 երեսի-խաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 58ի:

ԿՈՆԴԱԿ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ի ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ-ՅՈՐԵԼԵԱՆԻ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ն. Վահագնաւորիւն
Ամենայն Հայոց Հայրապետը կոնգակ ժը
ղրկած է Ազգ. Ժողովիս, պիտի կարգացուի:



(Ժողովը յոտընկայս ունենդրեց այդ կոն-
դակը որ պիտի հրատարակուի գրոց գիւտի
և արագորութեան յորեկանի նուիրուած բա-
ցառիկ նիստի ատենագրութեան մէջ) .—

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ծանօթ է ամէնուր
որ Հայ Գրոց գիւտի 1500 ամեայ և Հոյ
Տպագրութեան 400 ամեայ միացեալ Մեծ
Յորեկանը Պոլսոյ մէջ ևս արժանաւայել կեր-
պով տօնելու համար Յանձնախումբ մը կազ-
մուեցաւ : Սակայն անցեալ տարուան պատա-
հարներուն և դէպքերուն պատճառով այդ
Յանձնախումբը չկրցաւ ունէ գործ տեսնել :
Կը յուսանք որ այս տարի ան պիտի յաջողի
Տաճկահայոց մասնակցութիւնն ալ բերելու
այդ մեծ հանդէսին , որ Հայ ազգին համար
մեծ կարեւորութիւն ունի : Ուրեմն Վարչու-
թեան նկատողութեան կը յանձնենք հայ-
րապետական այս կոնդակը :

ԿԷՏԻԿ ՓԱՇԱՅԻ ԵՐԵՍՓՈՒԱՆՆԵՐԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը դրկած
է Կէտիկ Փաշայի մէջ կատարուած երեսփո-
խանական ընտրութեանց տեղեկագիրը , պիտի
կարդացուի :

(Ատենապետ Էֆ. կարդաց հետեւեալ
գիրը) .

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի ,

Ազգային Երեսփոխանական ընդհ. ժողովոյ

Մայրաքաղաքիս Կէտիկ-բաշայի թաղէն
պակասեալ երեք Երեսփոխաններու տեղ՝ ըստ
հրահանգի պատրիարքարանիս նորընտրու-
թիւն կատարուած և ընտրողական ժողովոյ
կողմէ Մայիս 26 թուականաւ տեղեկագրով
ներկայացուած էր արդիւնքը , յորմէ կը տես-
նուի թէ՛ քուէից բացարձակ առաւելութեամբ
Ազգ. երեսփոխան ընտրուած են՝

- Ազն. Յակոբ Էֆէնտի Աւետիսեան
- » Յակոբ » Նշանեան
- » Ներսէս » Զաքարեան :

Եւ որովհետեւ այս ընտրութեան կատար-
ման միջոցին և յետոյ՝ թաղեցւոց ոմանց կող-
մէ բողոքներ եղան ընտրական գործողու-
թեանց օրինաւորութեան դէմ այլ սակայն
Քաղաքական ժողովը նկատողութեան առնե-
լով այդ բողոքներն՝ հաստատեց թէ անոնք
չեն կրեր ունէ օրինական պատճառ բեկա-
նելու կատարուած ընտրութիւնն , Հետեւա-
բար՝ Սահմանադրութեան 81րդ յօդուածին
տրամադրութեան համաձայն ստուգելով կա-
տարուած ընտրութեան օրինաւորութիւնն և
նորընտիր երեսփոխաններուն ընտրելութեան
պայմաններն , կը փութայ ընդ գրոյս պատ-
կառելի ժողովիդ մատուցանել ընտրական տե-
ղեկագիրը :

Մնամք յարգանք

Ի դիմաց Քաղաքական ժողովոյ

Դեր-Ասեմադպիր

Ասեմապետ

Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ս. ԳԱՐԱԵԱՆ

28 Յունիս 1913

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ունէ դիտողութիւն
կայ այդ մասին :

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. Բողոքներ կան այդ
ընտրութեան դէմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Մեր դիւանին առջեւ
բողոք չկայ . իսկ Քաղաք. ժողովին գացած
բողոքները պատճառ չեն նկատուած ընտ-
րութիւնը բեկանելու , ուրեմն մի առ մի
քուէարկութեան կը դնեմ ընտրուածները :

(Մի առ մի քուէարկուելով վաւերացուե-
ցան և Ազգ. Երեսփոխան հռչակուեցան Յա-
կոբ Էֆ. Աւետիսեան , Յակոբ Էֆ. Նշանեան
և Ներսէս Էֆ. Զաքարեան) :

ԴԻԻԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւասութեան Դի-

ւանը Ատենապետ ընտրած է Օրմանեան Սըր-
բազանը , իսկ ատենադպիր Մելքոն Կիւր-
ճեան էֆէնտին և հաղորդած է : Համա-
րակալութեան Դիւանէն Զարեհ Սօրասան-
ճեան էֆ. հրաժարած ըլլալով՝ անոր փոխա-
րէն կը նշանակենք Պարգեւ Էֆ. Փափազ-
եանը :

Հ Ա Ր Յ Ա Պ Ն Դ Ո Ւ Մ

Ա. Զ. Գ. Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ա Ր Ա Ն Ի

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատրիարքարանի չի-
նութեան խնդիրը թէև փակուած էր . բայց
Շահրիկեան և Սահասարեան Էֆէնտի ուրիշ
կերպով մը կը վերաբանան զայն :

(Ատենադպիր Էֆէնտի կարդաց հետեւեալ
Գիրը) .—

Ազգային Կեդրոնական Ընդհանուր ժողո-
վի Մայր Դիւանին ,

Գուժ-գաբուի Պատրիարքարանին վերաշի-
նութեան վերաբերմամբ նախորդ վարչութեան
ուղղած իմ հարցումը՝ որ իւրացուցուած էր
Ազգ. Ընդհ. ժողովի կողմից , բողոքովին այ-
լափոխուած կերպով է պատասխանուած ներ-
կայ վարչութեան կողմից ժողովի վերջին ուր-
բաթ 7)20 Յունիսի նիստին մէջ :

Կարծէք ճակատագրական է որ բոլոր կեն-
սական խնդիրների վերաբերեալ վարչութիւն-
ներին ուղղուած հարցումները այնքան ժա-
մանակ ձգձգուին որ իրականութիւնը այլեւս
անհարգաւոր սխալին , չարիքին կամ գեղ-
ժուին դարման տանիլ , մինչև որ դէպքի-
քով իրենց անմիջական տպաւորութեան ազ-
դուցութիւնը կորսնցնեն և մինչև անգամ յի-
շուցութիւնները կորսնցնեն որոնցով իմ կող-
մից ուղղուած հարցերի վերաբերմամբ , որ-
պէս զի վարչութեան բացատրութիւնները տը-

րուին իմ բացառաբար բացակայ գտնուած
նիստերում :

Այսպէս է եղած նաև այս վերաշինութեան
հարցը : Հետեւաբար անցեալ նիստում ժողո-
վի քուէարկած բանաձեւը անհամապատաս-
խան լինելով իրականութեան , իմ հարցումը
այժմ հարցադրուածի փոխելով՝ ուղղում եմ
ներկայ վարչութեանը :

Իմ նախորդ հարցումը կրում է 1)14 Յու-
նիս 1912 թուականը և ժողովի կողմից ու-
ղարկութեան է առնուած , վիճաբանութեան
ենթարկուած , իւր ժամանակի վարչութիւնն
է լսուած և մի որոշում էլ քուէարկուած է
նոյն թուականի նիստի մէջ :

Ներկայ վարչութեան բեւելիք պատասխանը
կամ բացատրութիւն՝ պիտի լինէր ժողովի
այն որոշման ոգւոյն համաձայն՝ ինչպէս և
ժողովի վերջի որոշումն : Բայց քանի որ
նէր իւր նախորդ որոշումից ու վարչութեան
տուած բացատրութիւնները հրաւիրած պա-
տասխանատուութիւնները համաձայն :

Ազգային ժողովը բնաւ կարիք չունէր ներ-
կայ վարչութեան տեղեկանալու՝ թէ պատ-
րիարքարանի չինութեան ծախսը բիւտջէի մէջ
չէր անցած և ազգային ժողովից չէր քուէ-
արկուած : Իմ հարցումն էլ չունէր այդպիսի
մի տեղեկութիւն ստանալու բովանդակու-
թիւն : Հենց օրինական այդ պայմանները լը-
րացուած չի լինելուն համար էր որ վարչու-
թիւնից բացատրութիւն էր ուղղուած : Ինչ որ
նախորդ վարչութեան ատենապետը կրկնել էր
ժողովի վերջի նիստին մէջ , նոյնը արդէն ա-
ւել էր նաև Մ. Կիւրճեանի հարցապնդումի ա-
ռիթով 15 յուլիսի նիստի մէջ , բայց այն ժա-
մանակ ժողովը դատապարտելով վարչութեան
վարմունքը՝ յանձնարարել էր որ չը համար-
ձակուի այլեւս չինութիւնը առաջ տանելու
առանց խնդիրը իր ամբողջութեամբ ժողովի
քննութեան ու վաւերացմանը ենթարկելու : Եւ
վարչութիւնն էլ ըստ այնմ պարտաւորուել էր :

Նոյն վարչութիւնը իր այդ պարտակա-
նութիւնը չի կատարած հրաժարուել էր , Որով
նոր վարչութիւնը՝ յաջորդելով նախորդին ,
ժառանգել ու բնականաբար ստանձնել էր նա-
խորդի պարտականութիւնը :

Վարչութեան անդամները , համարեա ա-
ռանց բացառութեան , միեւնոյն ժամանակ
երեսփոխաններ , ընդհանուր ժողովի անդամ-
ներ են , որով զիտակից են համարուում ժողո-

վի վիճաքանութիւններն, որոշումներն ու տիրող մտայնութեանը:

Արդ, ակնհայտ է որ ներկայ վարչութեան բերած պատասխանը կամ բացատրութիւնը բոլորովին չի համապատասխանում հարցումի բովանդակութեանը և ժողովի նախորդ որոշմանը: Նա չի էլ գիտակցել թէ՛ հարցը և թէ՛ իւր պարտականութիւնը:

Նա պարտաւոր էր՝

Ա. Ժողովին բերել վերաշինութեան նախագիծը՝ ֆինանսական ու տէխնիկական պատճառաբանել տեղեկագրով միասին:

Բ. Նախագիծով կանխատեսուած ծախուց գումարն ու շինութեան մնացած մասի վերաբերմամբ հարկ տեսուած ծախուց նոյնպէս տեխնիկական տեղեկագրով կանխատեսուած գումարի քանակը:

Գ. Ծախսուած ու ծախսուելիք գումարները ստացուելիք աղբււրները:

Ներկայ վարչութիւնը այդ պարտականութիւններից ո՛չ մինը չէ կատարած:

Առաջին պարտականութիւնը չէ՛ կատարած առարկելով որ իւր նախորդը ոչ չինութեան համար նախագիծ, յատակագիծ և ոչ էլ տեղեկագիր է ունեցել:

Գերազանցապէս ուշադրութեան արժանի է՝ որ մի վարչութիւն ոչ միայն պատասխանատուութիւն է ստանձնում առանց ընդհանուր ժողովի հաւանութեանը, մինչեւ իսկ հակառակ դրան և միայն իւր հեղինակութեամբ այդպիսի կարեւոր շինութիւնների և ծախսերի ձեռնարկելու այլ և իր ձեռնարկի օգտակարութիւնը կամ մնասկարութիւնը եզրակացնող ֆինանսական ու տեխնիկական քննութեան ու վկայութեան անգամ չի դիմում, որքան ծախսուելու է չի՛ հաշուում չի որոշում:

Վարչութեան անդամներից ո՞րը արդեօք իրաւ անձնական սեփականութեան վերաբերմամբ այդպիսի անհոգութեան, չստեմ անարեւելիքութիւնը կը թողնար իրան:

Բայց աւելի դառնագոյնը կայ:

Ներկայ վարչութիւնը՝ որ նախորդին դատապարտում է, ինքը եւս նախորդի շաւղից չէ չեղուել: Կարելի է ստել որ եթէ նախորդը անգիտակցաբար է գործել, ներկայ վարչութիւնը գիտակցաբար է մեղանչել:

Ներկայ վարչութիւնը պարտաւոր էր գործի գլուխ անցնելով՝ անմիջապէս կանգնեցը-

նել շինութեան աշխատութիւնները, մասնագիտական քննութեան ու խորհրդակցութեան դիմելով՝ լրացնել այն ամէնը որ նախորդը պակաս էր թողել և անհրաժեշտ էր շինութեան իւր գտած վիճակից մնացորդը լրացնելու համար:

Ներկայ վարչութիւնը այդ արե՞ր է:

Նախ, եթէ արել է, ո՞ւր են համապատասխան տեղեկագիրն ու աղբւրմանները: Եթէ չէ արել ինչո՞ւ:

Երկրորդ, քանի որ ընդհանուր ժողովը որոշել էր առանց աղբային ժողովից արտօնուելու՝ այլ եւս ծախս չանել. պարտաւոր էր հենց որ նախորդի սանձամբ գումարը սպառուել էր, նոր կանխատեսուած գումարի և փոխառութեան համար դալ և ընդհ. ժողովից վարկ ու արտօնութիւն պահանջել. ինչո՞ւ չարեց այդ:

Երրորդ, յայտնի չէ՛ թէ ունի՞ արդեօք ներկայ վարչութիւնը նախորդի սանձամբ գումարը սպառուելուց անմիջապէս յետոյ մնացորդ շինութիւնը լրացնելու համար կանխատեսած գումարի որոշում: Եթէ կանխատեսած է՝ որքա՞ն էր դրանից յետոյ եղած ծախսերը և դեռ լինելիքները համապատասխանո՞ւմ են այդ կանխատեսուածին: Եթէ չէ՛ կանխատեսուած, եթէ ծախսերը չեն համապատասխանում. ինչո՞ւ:

Այս բոլոր հարցերին ու պարագաները՝ որոնք շատ ծանրակշիռ են, վարչութեան նոր ուսումնասիրութիւնների կարօտութիւն ունեցողներ չեն, որպէսզի կարենայ լսել թէ ի վիճակի չէ անմիջապէս պատասխանելու և բացատրութիւններ տալու: Որովհետեւ այդ բոլորը իրաւ սեփական գործառնութեանն է պատկանում, անհրաժեշտ է որ առանց յետաձգուելու պարտաւորուի ստիպողական կերպով անմիջապէս պատասխանելու:

Ստիպողականութիւնն ու հարցապնդման վերածումի անհրաժեշտութիւնը նրանից է բըղխում մասնաւանդ՝ որ դէպքերի կամ իրողութեան ընթացքը ընդհանուր ժողովի որոշումից յետոյ և այդ որոշման դէմ լինելով, ընդհանուր ժողովի վրայ աւագ պարտականութիւն է վիճակուած մի անգամ ընդ միշտ վճելու՝ թէ վարչութիւնները ու է պատրուակով իրաւունք պիտի ունենան ընդդատելու ընդհանուր ժողովի որոշումները, իրանց աւելի բարձր համարելու, և այդպիսի պա-

րագաներում ի՞նչ պիտի լինի այդ վարմունքը ունեցողների պատասխանատուութեան սահմանը:

Խնդրում եմ իրազէկ անել վարչութիւնը այս հարցապնդումի մասին ժողովի առաջիկայ նիստից առաջ և ընդունիլ յարգանազա հաւատարմ:

Աղբային երեսփոխան

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ

Բոլորովին համաձայն Շահրիկեան էֆէնտիի դիտողութեանց կ'ստորագրեմ:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

11)14 Յունիս 1913

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այդ խնդիրը Օրակարգին վրայ էր, որոշում արուած է, և վճիռ մը միայն երեք ամիսէն ետք կրնայ փոխուիլ ըստ օրինի:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Ատենապետը առանց ժողովին հարցնելու իրաւունք չի կրնար ունենալ խնդիր մը փակելու:

ՁԱՅՆԻՐ.— Օրէնք է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Օրէնքի հետ ոչ մէկ կապ ունի. մեր հարցապնդումը ուղղուած է ներկայ վարչութեան, առիկա նըմանութիւն ունի՞ արուած ու է որոշումի մը հետ. եթէ օրէնքը դուք գիտէք ես ալ գիտեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Օրակարգի անցած խնդիր մը միայն կ'ենթարկուի քուէարկութեան, և այս խնդիրը երեք ամիսէն առաջ չի կրնար օրակարգի անցնիլ և վիճաքանութիւն ալ չի կրնար ըլլալ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Դուք իրաւունք չունիք բռնաբարելու յողովին իրաւասութիւնը, ժողովի քուէին ձգեցէք անիկա թող ձեռք այդ կէտը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Օրէնքն է հոս տիրապետող:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.— Բայց թուղթին տէրը իրաւունք ունի դիտողութիւն ընելու: Շահրիկեան էֆ. ուղիղ նկատողութիւն մը ըրած է որ պատճառ կրնայ ըլլալ նախորդ որոշումի վերաքննութեան: Խնդիրը այժմէութիւն ունի: Շինութիւնը դեռ չէ աւարտուած: Շահրիկեան էֆ. կը հարցնէ թէ տակաւին ո՞րքան մասին համար վճարուելիք կայ, այսինքն ո՞րքան դրամի պէտք ունի: Ո՛չ մէկ ժողովական իրաւունք ունի երեսփոխանի մը այդ պահանջը ժխտել: Գէթ այդ մասը ճշտենք:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ.— Պիտէ՛ի մէջ նշանակուած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը ցաւիմ որ Շահրիկեան էֆ. ինք հոս ներկայ չէր երբ շինութեան նախահաշիւը հոս չբերուելուն համար արդէն մեղմօրէն ցաւ յայտնուեցաւ: Ուրեմն մենք այդ ցաւն ալ յայտնած ենք:

ՁԱՅՆԵՐ.— Խօսք կ'ուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խօսք չեմ տար. Կը ցաւիմ որ դուք Շահրիկեան էֆ. օրէնքը գիտէք և ի դուր ժամավաճառ կ'ընէք մեզ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Կը բողոքեմ ձեր կամայականութեան դէմ: Աղբային ժողովի մէջ ապագայի համար է որ ցաւ յայտնուած է: Քուէի դրէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Ձեմ կրնար այդպիսի բան քուէի դնել, օրէնքի հակառակ է: Երբ այդ նիստին ատենագրութիւնը տպագրուի և ժողովիս բերուի, այն ատեն դիտողութիւնն իր դրէք:

ԱԻՅՏԻՍ ԷՖ. ՍՈՒՐԵՆԵԱՆԻ ԽՆԴԻՐԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Աւետիս էֆ Սուրէն եանի գիր մը ունի, որով կը բողոքէ իրեն

վերաբերեալ խնդրոյն ու է հետեւանք ստա-
ցած չըլլալուն համար:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. — Սուրենեան էֆ.
երեսփոխան ընտրուած է: Ժողովը իր իրա-
ւունքին մէջ է երբ է հաստատած անոր ըն-
տրութիւնը և չի կրնար անհատի մը նամակը
նկատի առնել:

Դ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ. — Նախաքըն-
նիչ Դիւանին պէտք է ղրկել:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Չենք կրնար
նկատի առնել: Անհատ մը չի կրնար նամակ
գրել Ազգային Ժողովին: Այդ գիրը Վար-
չութեան պէտք է երթայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախաքըննիչ ղրկա-
նին ղրկուելու համար ժողովդ առարկութիւն
ունի:

ՉԱՅՆԵՐ. — Իրաւունք չունիք ղրկելու:

Ե. ՊԵՏԱԶԵԱՆ ԷՖ. — Օրինական դի-
տողութիւն մը ունիմ: Սուրենեան էֆ. 30
տարուան ազգային կեանք ունեցող մէկն է.
և սահմանադրութիւնը անհատական իրա-
ւունքները կը պաշտպանէ: Ես խօսելու
իրաւունքս կը գործադրեմ: Առաջին ան-
գամ չէ որ Սուրենեան էֆ. ի խնդիրը հոս
կուգայ և դիւանական գործողութեամբ կը
խեղդուի: Պէտք է Նախաձեռնութեան Դի-
ւանին ղրկենք և անոր տեղեկագիրը հոս գալէ
ետք եզրակացնենք թէ՛ Ազգ. Ժողովին
տուած նախորդ որոշումը ապօրէն է թէ ոչ:
Ատենական գործողութեամբ չըլլար ատիկա:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ես այն անձերէն
չեմ որ օրէնքի տառին կառչելով թող տամ
որ անհատը իր օրինաւոր քաղաքական ի-
րաւունքներէն զրկուի: Սակայն այդպիսին
պէտք է վարչութեան դիմէ: Բայց եթէ վար-
չութիւնն ալ անտես առնէ ո՞ւր պէտք է դի-
մէ, բայց եթէ հոս ուր գերագոյն հեղինակու-
թիւնը կը գտնուի, այսինքն Ազգային Ժողով.
անշուշտ հոս է որ ու է ղրկանքի դէմ բո-
ղոքի ձայն պէտք է բարձրանայ: Ես համա-

միտ չեմ որ օրէնքի ձեւականութիւններէն
օգտուինք, բայց Դիւանը ինք նկատի պէտք
է առնէ նախապէս թէ ասկէ առաջ որոշում
մը կայ այդ մասին, վճիռ մը կայացած է,
արդեօք այնպիսի վճիռ մըն է որ կրնայ
վերաքննուիլ թէ անքննելի է: Ինչ կը թուի
թէ հոս օրէնքի յարգանքի և ղրկանքի խնդիր
չկայ: Որոշումը երկու տարի առաջ տրուած
է: Այդ ո՞րպիսի յարգանք է իր իրաւուն-
քի, որ երկու տարի լուռ կը մնայ և այժմ
մէջտեղ ելած է...:

ՉԱՅՆ ՄԸ — Սխալ է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Երբ Երուսա-
ղէմի խնդիրը մէջտեղ ելաւ, այն ատեն Սու-
րենեան էֆ. իր խնդիրը մէջտեղ հանեց: Սա-
կայն Ազգ. Ժողովը պէտք չուի Սուրենեան
էֆ. ի փաստերուն, փաստաբաններու պէտք
չունինք:

ԴԱԻ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ. — Ներքին
կանոնագրի 89, 90 և 91րդ յօդուածները
կան մէջտեղ. որուն համաձայն անհատները
կրնան աղերսագիր տալ Ազգային Ժողովին,
որ կամ զայն կը ղրկէ Յարաբերական Դիւա-
նին և կամ եթէ յարմար չի տեսնել կը մեր-
ժէ: Ես չեմ մտնել խնդրին էութեան մէջ
բայց բան մը կ'աւելցնեմ. ժողովս զբաղեցաւ
այդ խնդրով, միեւնոյն ժամ, այժմ ենթական
խնդրագրով դիտողութիւն կ'ընէ: Օրէնքով
ո՞րը յարմար է պէտք է որոշենք: Ըստ իս
պէտք է Նախաձեռնութեան ղիւանին ղրկենք
որ քննէ: Երուսաղէմի խնդիրը պէտք է չկայ
խառնել ատոր մէջ, կապ չունի անոր հետ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ով որ կ'ուզէ նախա-
ձեռնութեան Դիւանին ղրկուի թող ձեռք
վերցնէ:

Հ. ԽՈՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Նախ պէտք
է ժողովին հարցնել թէ վիճաբանութիւնը չա-
րունակե՞նք թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը կ'ուզէ՞ վի-
ճաբանիլ:

ՉԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ով որ կ'ուզէ
որ նախաձեռնութեան ղիւանին ղրկուի թող
ձեռք վերցնէ:

ՉԱՅՆ ՄԸ. — Յարաբերական Դիւանին:

(Յի դէմ 20 ձայնով Ժողովը որոշեց յղել
Նախաձեռնութեան ղիւանին:

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ա Ր Ա Ն Ի

ՍՏՈՐԱԴԱՍ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԹՈՇԱԿՆԵՐԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պիտի կարդացուի
Վարչութեան մէկ գիրը:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ
գիրը):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային Երեսփոխանական ընդհ ժողովոյ
Ազգային վարչութեան Քաղաքական Ժո-
ղովն ի նկատի առնելով երկրին ներկայ տը-
տեսական տագնապը և ապրուստի տարա-
պայման սղութիւնը և անյետաձգելի համա-
րելով պատրիարքարանի երկրորդ կարգի
պաշտօնէից և բարապանաց ու սենեկապան-
ներու ամսաթոշակաց կարգադրութիւնը, կ'ա-
ռաջարկէ որ մինչեւ ելեւմտացոյցի վաւերա-
ցումն Պատկ. Ժողովէդ որու մատուցուած է
արդէն, հաճի արտօնել ելեւմտացոյցին նոյն
պաշտօնէից թօշակաց յատուկ գլխուն դոր-
ծադրութիւնը, սկսեալ յառաջիկայ յուլիս
ամսոյ սկիզբէն:

Մնամք յարգանք

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Ատենադպիր
Տ. ԵՐԿԱՆԵԱՆ

Ատենապետ
Ս. ԳԱՐԱԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ ընդունուի
կրնայ համարուիլ:

ԵԴ. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ — Կրնայ ըլլալ:

ՉԱՅՆԵՐ. — Խօսք առէք յետոյ խօսեցէ՛ք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք Շահրիկեան
էֆ. ինն է:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Այսպիսի առա-
ջարկ չըլլար: Ատիկա պիւտճէի մաս կը կազ-
մէ, որ Համարակալութեան Դիւանին քով
է այժմ: Պատրիարքարանի պաշտօնէութե-
նէն 6000 զրշ. խնայուած է: Թող վարչու-
թիւնը ատոր սահմանին մէջ իր ուզած յա-
ւելումները ընէ Ատկէ աւելի մեծ գումար-
ներ ծախսեց այնքան պաշտօնեաներու թո-
շակները աւելցուց առանց հոս բերելու. իսկ
ատիկա, որ իր իրաւասութեան սահմանին
մէջ է, ի զուր հոս կը բերէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վարչութիւնը թող
պատասխանէ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. (Վարչութեան
կողմէ) — Անցեալին համար արդի Վարչու-
թիւնը պատասխանատու չէ: Մենք 10 փա-
րայի յաւելում բրած չենք, առանց Ազգ.
Ժողովին բովէն անցնելու: Այս գիրը հոս
բերինք, որովհետեւ ստորադաս պաշտօնէից
վիճակը չափէն աւելի սննդով է. և եթէ գո-
հացում չի տանք չենք գիտեր ի՞նչ կ'ըլլայ
հետեւանքը: Փոքրիկ գումարներ են աւել-
ցուելիքները, և առժամայ արտօնութիւն
կ'ուզէ, մինչեւ որ պիւտճէն ընդունուի:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Դիւանին պարտ-
քըն է, երբ հարցի մը պատասխանը չէ տրե-
ուած՝ պահանջէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեզ չգոհացուց Վար-
չութեան պատասխանը:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ձեզ գոհացուց:

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Առանց վիճա-
բանութեան պէտք է ընդունինք այս առա-
ջարկը: Սակայն սպառնալիք կայ ատոր մէջ
պէտք է ետ առնուի:

ՁԱԹՆԵՐ. — Սպառնալիք չկայ:

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Ճիշտ է սր Պատ-
րիարքարանի ստորադաս պաշտօնէութիւնը
որ այնքան պարկեշտ է ու պարտաճանաչ,
այժմ նիւթական անձկութեան մէջ է: Բայց
պէտք չէ թողունք որ վարչութիւնը այսքան
ջնջին խնդիրներով զբաղի, ան այժմ ժո-
ղովրդեան կեանքի և մահուան խնդիրներով
կը զբաղի: Ասիկա չափ տարրական պահանջ
մըն է. հետեւաբար կ'առաջարկեմ՝ առանց
մանրամասնութեանց մէջ մտնելու՝ արտօնել
վարչութիւնը որ ընէ այդ յաւելումները:

Դ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. — Արամ-
եանց էֆ. կը թուի թէ վարժ չէ ելեւմտա-
կան խնդիրներու: Վարչութիւնը չի կր-
նար առանց ելեւմտացոյցը վաւերացը-
նել տալու՝ ծախք ընել, յաւելում ընել:
Ելեւմտացոյցը ժողովիս բերաւ որ քննուի:
Այժմ անոր մէկ մասը կ'ուզէ անմիջապէս
վաւերացնել տալ. ուրեմն պէտք է հոս ըսէ
թէ ինչ պաշտօնեաներու է որ յաւելումներ
պիտի ընէ. ինչքան իւրաքանչիւրին որոշ
անուններով պէտք է ըսէ, այսչափ պաշ-
տօնեաներու այսքան գումար բայց ալ
ցուցնէ և առաջարկէ որ երեք կամ մէկ ա-
միս գործադրելի ըլլայ իրր առժամեայ պիւտ-
ճէ: Մեր վարչութիւնը հակառակ որ մարտ
31ին պիւտճէն պիտի բերէր, մայիսն ալ ան
ցաւ: Մինչդեռ ինքն իրեն այնքան ծախսեր
եւ թոշակներու յաւելումներ ըրած է,
Ասիկա ելեւմտացոյց բերել չէ, ալ ժողովս
ծաղրել է: Հակառակ պարագային ամբաս-
տանութեան տակ կ'իյնայ:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը
կ'ըսէ իր նամակին մէջ թէ՛ ներեցէք որ
պիւտճէն սկսիմ գործադրել: Ասիկա կարելի
չէ: Ան իր տեղեկագրին մէջ կը խոստովանի
թէ պարտաւորուած է նուէրներ տալ այս ու
այն պաշտօնեային՝ առանց այս ժողովէն ար-
տօնութիւն առնելու. ուրեմն այս յաւելում-
ներն ալ թող ընէր:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — (Վարչութեան
կողմէ.) Տրուած տեղեկութիւնը սխալ է:

Նուէրները եղած են պիւտճէի սահմանին մէջ,
անցեալ տարի խնայողութիւն մը եղած էր.
ատ է որ գործածուած է նուէրներու հա-
մար. ուրեմն 1912ի պիւտճէի սահմանին մէջ
էր:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. (Ընդմիջելով). —
Սխալ քեզ է նուէրներ տալ պաշտօնեաներուն:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — (Շարունակե-
լով) Վարչութիւնը իր պարտականութիւնը
կատարած է: Հին պիւտճէին խնդիրը փա-
կուած է, ներկային նայինք: Մենք կ'առա-
ջարկենք որ Յունիսին գործադրենք նոր
պիւտճէին մէկ կէտը, այսինքն մինչեւ 400
չըշ. ամսաթոշակ ստացող պաշտօնեաներուն
յաւելումները ըլլան, մինչեւ որ պիւտճէին
քննութիւնը աւարտի: Այժմ նոր պաշտօնեայ
անուանուելու խնդիր չկայ. նորութիւն մը
չկայ, եղած պիւտճէին սահմանին մէջ է:

ՄԱՐԿ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Վարչութեան
դիմուած գոհացուցիչ է. առանց այս ժողո-
վին արտօնութեան ու է ծախք չընելու ըս-
կզբունքը ընդգրկած է իր ընդհանուր տեսա-
կետին մէջ: Ուրիշ պարագաներուն մէջ պէտք
չէ թողաւորենք, բայց գոնէ այս մասնաւոր
պարագային մէջ թողաւորենք որ յուլիս 1էն
գործադրէ: Որովհետեւ պիւտճէին քննու-
թիւնը կընայ հրկարիլ, ժողովը յաճախ մե-
ծամասնութիւն չունենալով, խղճի դէմ է
անոնց յաւելումը յապաղեցնել: Ժողովը իր
օրէնսդրական սահմանին մէջ կրնայ արտօնել
որ մինչեւ 400 զրշ. ամսաթոշակ ունեցողնե-
րուն յաւելում ըլլայ, չեմ կարծեր որ՝ երբ
պիւտճէն ժողովիս գայ՝ ու է մէկը դէմ ըլ-
լայ այդ յաւելումին: Ես կ'առաջարկեմ ըն-
դունիլ վարչութեան առաջարկը՝ որպէսզի
զրկանք չըլլայ պաշտօնեաներուն:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Իմ առաջարկը
այն էր թէ՛ բարապանները որ ունենէն քիչ
ստացող և ամենէն չափ աշխատողներն են,
կրնան գոհացում գտնել, ատոր համար ան-
հրաժեշտ չէ օրինական ձեւականութիւններ:
Ճիշդ է Դաւիթ էֆ. Տէր Մովսէսեանի պըն-
դածը թէ նոր պիւտճէի մաս պէտք չէ կազ-

մէ ատիկա: Պիւտճէն քննութեան կը արուի,
բայց վարչական մեքենան կեցած չէ. եթէ
վարչական մեքենան կեցած է կ'ըսեն իւշո՛ւ
անցեալ տարի 1000ով ծախսեցին. եթէ վար-
չութիւնը խաչոր գումարներ կը ծախէ ա-
ռանց արտօնութեան, ինչո՛ւ 900 ծախսելու
համար արտօնութիւն կ'ուզէ: Հարցը գու-
մարի մասին չէ անշուշտ. վարչութիւնը վարկ
կ'ուզէ. եթէ պիւտճէն դուրս յաւելում մը
ըլլար՝ այն ատեն վարկ ուզելու պէտք կար,
բայց անցեալ տարուան պիւտճէին սահմա-
նին մէջ կարելի է թոշակներուն այդ յաւե-
լումը ընել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործո-
ղութեանց համար մէկ ժամը աւարտած է և
երեսփոխաններուն օրինական թիւը լեցուած.
ուրեմն օրակարգի անցնինք:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Պիւտճէի խոն-
դիրը կարեւոր է. սկզբունքի խնդիր է. եթէ
երեսփոխանները կը վիճին ատոր վրայ՝ պատ-
ճառն այն է որ մեր վարչութիւնները դրա-
մական խնդիրներու մէջ վստահութիւն չեն
ներշնչած. հետեւաբար ժողովս ինք է որ
վերէն ուղղութիւն պիտի տայ Ըսենք որ
լաւագոյն մտածում մը ունեցէր է վարչու-
թիւնը բարապաններուն թոշակները աւելցը-
նելու, բայց ոչ թէ չեղելով պիւտճէն. զար-
մանալի բան է որ այդպիսի պիւտճէի կա-
րեւոր խնդիրներ հոս չեն բերուիր, իսկ
Շօաննէսկուի սակը հարիւրին 4էն 3ի իջեցնե-
լու խնդիրը, կը բերուի:

Ազգային ժողովը յաւակնութիւնն ունի
Երուսաղէմի հաշիւները կեդրոնացնելու հոս,
մինչդեռ Պատրիարքարանի հաշիւներու մասին
խստապահանջ չըլլար: Պատրիարքարանի չի-
նութեան և դրամական նուէրներուն խոն-
դիրները հոս չեն բերէր, մինչ այս փոքրիկ
յաւելումներուն խնդիրը կը բերեն. թող ընէ
այդ յաւելումները, կրնայ փոխ առնել, բայց
պիւտճէին թող չդաշի: Հեգնութիւն մըն է
ասիկայ. երբ թաղական խորհուրդները փո-
խառութիւն կ'ընեն և պիւտճէ չեն ներկա-
յայնէր՝ Տնտեսական Խորհուրդէն յանդիմա-
նութիւն կ'ընդունին, իսկ վարչութիւնը օ-

րէնքէն վեր կը մնայ: Ուրեմն գէթ տեսակ
մը խստութիւն պէտք է ի գործ դնել:

Ս. ԳԱՐԱԵԱՆ ԷՖ. — (Վարչութեան կող-
մէ.) Արդէն պատրիարքարանի չինութեան
համար գործողութիւնները շատ անկանոն կեր-
պով կատարուած են, Բայց կատարուած գոր-
ծողութեան մը առջեւ գտնուեցաւ ներկայ
Վարչութիւնը: Քանի որ ասանկ եղած իրո-
ղութեան մը առջեւ էինք, անհրաժեշտ էր
որ վարչութիւնը ճար մը ընէր Պատրիարքա-
րանին չինութիւնը աւարտելու համար և
ստիպուեցանք փոխառութեան ձեւով պակ-
սած գումարը տրամադրել: Բայց հիմա մեզի
կ'ըսուի թէ՛ քանի որ մեծ ապօրինութիւն
մը ըրիք, ուրեմն պզտիկներ ալ ըրէք. ճըշ-
գրիտ գնահատում մը չէ ատիկա: Պաշտօն-
եաները եկան մեզի ըսին թէ՛ ի վիճակի չենք
ապրելու և մեր պաշտօնը շարունակելու,
ըմբոստութիւն մը չէր ատիկա, և մենք ի-
րաւունք տուինք անոնց, ըսինք հաւանական
է որ պիւտճէին քննութիւնն ու վաւերացու-
մը ուշանայ, ուրեմն առաջարկ բերենք ժո-
ղովիս: Եթէ օրէնքի յարմար չէ այդ առա-
ջարկը, ուրախ կ'ըլլանք որ օրինաւորը մեզի
ցուցնէք, որովհետեւ ասկէ աւելի օրինաւորը
կամ գէթ նուազ ապօրինաւորը չգտանք մենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ով որ կ'ընդունի
վարչութեան առաջարկը թող ձեռք վերցնէ:

ԴԱԻ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. — Եթէ
վարչութեան առաջարկը չընդունուի ուրեմն
խնդիրը օրակարգի պէտք է անցնի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պիտի կարգացուի
երկու բանաձեւեր, ստորագրուած մէկը Շահ-
րիկեան և միւսը Նաթանեան էֆէնդիներէ:

Լսելով վարչութեան առաջարկը ի մասին
մինչեւ 400 զրուշի ամսական ունեցող պաշ-
տօնէից թոշակին վրայ յաւելման յուլիս 1էն
սկսեալ, ժողովը կ'որոշէ ընդունիլ վարչու-
թեան առաջարկը:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Նկատելով որ բարապանների թոշակների յաւելումը մի բացառիկ յաւելեալ վարկ պահանջելու բնոյթը չի կրում, նկատելով որ այդ յաւելումը կատարուելու է բարապանների յատուկ սիւնակով նախորդ տարիի պիւտճէի սահմանուած գումարի սահմանին մէջ, ժողովը աւելորդ է համարում այդ հարցով ըզբաղուելու և իւր իրաւասութեան սահմանին մէջ գործելու համար վերադարձնում է վարչութեան:

Թ. ՇԱՀՐԻԿԵԱՆ

Թ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Ես բերի այդ բանաձեւը, որովհետեւ վարչութիւնը առհասարակ թոշակներու յաւելման առաջարկ բերած է, ուստի զայն չենք կրնար նկատողութեան առնել: Առ հասարակ մասնաւոր ծախքերու համար պիւտճէներէ դուրս՝ միայն բացառիկ պարագաներու մէջ իրաւունք ունի վարկ պահանջելու: հոս պարագան այդ չի ներկայացնէր:

ՁԱՅՆ ՄԸ — (Ընդմիջելով.) Ապա ի՞նչ ընէ:

Թ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Մտքին մի քիչ զօռ թող տայ: Բարապաններու պահանջը կարելի է հաշտեցնել օրինաւորութեան. տրաւադրելի աւելցած գումար մը կայ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ.— Ձկայ:

Թ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Եթէ չկայ, ուրեմն աւելի մեծ թոշակաւորներուն տրուած նուէրները ետ առէք և բարապաններուն թոշակը աւելցուցէք:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.— Եթէ դուք իրաւունք կուտաք Շահրիկեան էֆ.ի ըսածին, ես փաստեր ունիմ հերքելու զայն:

ՁԱՅՆԵՐ — Բուէ՛, քուէ՛:

(14ի դէմ 25 քուէով ընդունուեցաւ Մարկոս Նաթանեան էֆ.ի բանաձեւը):

ԽՈՐՀՐԴՈՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ.— Այժմ օրակարգի անցնինք:

ՄԱՐԿ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ.— Օրինական դիտողութիւն մը ունիմ: Ամէնքս ալ կը յիշենք թէ անցեալ նիստին բացատրութիւն պահանջուեցաւ վարչութենէն Հայաստանի կացութեան մասին և ըսուեցաւ որ այս նիստը դռնփակ ընենք և լսենք վարչութիւնը: Սակայն կը տեսնեմ թէ Դիւանը ոչ միայն նիստը բացած է, այլ և առանց ակնարկութիւն մ'իսկ ընելու ատոր, կ'անցնի սովորական օրակարգին: Սակայն Հայաստանի կացութեան խնդիրը ամէնէն էականն է:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ.— Տեսնենք վարչութիւնը պատրաստ է պատասխանելու:

Վ ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ. (Վարչութեան կողմէ). — Անցեալ նիստին յարուցուածը թիւրիմացութեան մը խնդիր էր. այն ալ խորհրդարանական Յանձնաժողովի միջեւ: Ժողովս հրաւիրեց զայն որ առանձին ժողով գումարէ և որոշում մը կայացնէ:

ՎԱՀ. ԹԵՔԷՆԵԱՆ ԷՖ.— Այո՛, մեղի վերաբերեալ խնդիր մըն էր, բայց թէև այդ մասին գիր մը չստացանք Դիւանէն, բայց մենք մեր պաշտօնը Ազգ. ժողովէն ընդունեցանք և կը կատարենք. անցեալ նիստին հոս խօսուածներու առթիւ խորհրդակցեցանք և տեսանք որ անհամաձայնութիւն գոյութիւն չունի: Ապահովութեան յանձնաժողովը կը գործէ, և մեր Ատենապետ էֆ.ն յարուցած խնդրին համար բացատրութիւն ստանալէ յետոյ՝ կը գործակցի մեզի:

Տ. ՀՄԱՅԻԱԿ ԱՐՔԵՊՍ. — Ամէն անգամ երբ հարստահարական կամ բարենորոգման խնդրին համար հարցումներ կ'ուղղուին և բացատրութիւն կը պահանջուի վարչութենէն, միշտ կը յետաձգուի: Կը սպասենք որ վերջապէս վարչութիւնը բացատրութիւն տայ:

Թէ ինչ եղաւ իր ձեռնարկներուն արդիւնքը, Կ'առաջարկեմ առաջիկայ նիստը դռնփակ ընել և Հայկական խնդրով զբաղիլ:

ԱՏՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովը կ'ընդունի՞ որ առաջիկայ նիստը դռնփակ ըլլայ:

ՁԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛:

ՎԱՀ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.— Շատ օրինաւոր են սրբազանին բաղձանքները. բայց Հայկական Հարցը այնպիսի փուլի մը մէջ է որ փափուկ է և վտանգ իսկ կրնայ առաջ գալ. եթէ այդ մասին հոս յայտարարութիւններ ընենք, Շատ բան չենք կրնար ըսել, քիչն ալ ձեզի գոհացում չպիտի տայ: Քիչ մըն ալ յետաձգեցէք. յարմար առթիւ կը խօստանանք բացատրութիւններ տալ այդ մասին:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.— Զարմանալի է որ բողոքի ձեւով արուած հրաժարական մը այսպէս դիւրութեամբ ետ առնուած է միւս կողմէ այժմ ալ վարչութիւնը կ'ընէ թէ պայմանները նպաստաւոր չեն բացատրութիւններ տալու: Եթէ վարչութեան համար չէ, մեզի համար յարմար է: Եթէ ինծի ձայնակցող կայ՝ հարցուի ձեւով պահանջ ընենք որ վարչութիւնը համարաւորութիւն մը ընէ...

ՁԱՅՆԵՐ.— Կր ձայնակցինք:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.— Ազգային ժողովին պէտք է վստահիլ, քանի որ ազգին ընտրած երեսփոխաններէն կը բաղկանայ և ոչ վարչութենէ մը աւելի վստահելի է:

Տ. ԵԶՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՆԵԱՆ.— Անցեալ անգամ Շահրիկեան էֆ. հրաժարագիրը ժողովին բերուեցաւ և խորհրդարանական յանձնաժողովին յանձնեցինք որ բացատրութիւն ստանայ: Վարչութենէն ոչ և է բացատրութիւն մենք չենք կրնար առնել. մենք յանձնաժողով մը ընտրեցինք որպէս զի խնդրին ներքին գաղտնիքներով զբաղի, այդ Յանձնաժողովը միջնորդ մը խողովակ մը պիտի ըլլար մեր և վարչութեան միջեւ:

ԴԱԻ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.— Դուք վարչութեան անդամ չէ՞ք:

Տ. ԵԶՆ. ՎՐԴ. ՊԱՊԱՆԵԱՆ.— Իբրեւրեսփոխան կը խօսիմ: Որովհետեւ իբր վարչութեան անդամ չիմ գիտեր ինչ կ'անցնի կը դառնայ:

ՀԱՅԿ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.— Արձանագրեցէք այս խօսքը որ վարչութեան անդամներն ալ չեն գիտեր:

Թ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Վարչապետը վարչութեան անդամ է և կը կարծէ թէ երկու տեսակ կրնայ խօսիլ. երբ վարչութեան անունով հոս կ'ըսեն թէ՛ «անպատեհ է», դուք Խորհրդարանական Յանձնաժողովին բերնով չէք կրնար պահանջել որ խօսուի անպատեհ. մի քիչ կարգ կանոն սորվեցէք: Թէքեան էֆ. ալ իրաւունք չունէր յանուն Խորհրդարանական Յանձնաժողովին խօսելու: Խնդիրը Խորհրդարանական Յանձնաժողովին ձգել որոշուեցաւ, որովհետեւ իմ տուած բացատրութիւնները չգոհացուց այս ժողովը եւ որոշուեցաւ որ խորհրդարանական յանձնաժողովը գումարուի, եթէ չհամաձայնիմ անոնց հետ, այն ատեն խնդիրը բերենք հոս: Խորհրդարանական Յանձնաժողովը լսեց պատճառներս և համաձայնեցաւ որ դարմանը միասին խորհինք: Ուրեմն հրաժարականը առկախ մնաց, եթէ դարման չլինի, պարզ հրաժարական կուտամ և կը քաշուիմ: Խօսաւորեան էֆ. բան մը աչքի առջեւ պէտք է ունենայ՝ որ Խորհրդարանական Յանձնաժողովը կազմուած է այն պատճառով՝ որ ամէն բան հոս չբերուի. ան միջնորդը պիտի ըլլայ այս ժողովին և վարչութեան միջեւ եւ իբր ներկայացուցիչ, օ Բուրան ըլլալու համար գործերուն, և երբ ազգային շահերու հակառակ բան մը չի տեսներ չի բերեր, իսկ երբ վտանգ մը տեսնէ այն ատեն կը բերէ: Այս Յանձնաժողովը ծնաւ խմբակցութեանց ներկայացուցիչներու համաձայնութեամբ. անոր ծնունդը պատմութիւնը երբ նկատի առնենք, պէտք է ինք այս ժողովը իբր ծնող՝ զգոյշ լինի: Եթէ վերապահումներ կ'ըլլան բացատրութեանց մէջ, պէտք է գիտնայ թէ ազ-

գային չահերու համար է: Այս ձեռով կ'առաջարկեմ փակել խնդիրը:

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ.— Համաժողովի նախագահ Եֆ. Թեքենյան Էֆ. վերջին բացատրութեան: Ես ալ անգամ եմ այդ Յանձնաժողովին: Ճիշտ է թէ՛ երբ Յանձնաժողովը իր հսկողութեան իրաւունքը զործ կը դնէ, ըսել համաձայն է վարչութեան հետ, նոյն իսկ երեսփոխանական ժողովի դռնփակ նիստի մէջ աւելորդ կը դառնայ բացատրութիւն տալ: Ասիկա կ'ըսեմ ոչ թէ երեսփոխաններու իրաւունքը բռնաբարելով, այլ ըսել կ'ուզեմ թէ ամէն երեսփոխան կրնայ իր խմբակցութենէն այդ Յանձնաժողովին մէջ գտնուած ներկայացուցիչին միջոցով տեղեկութիւն ստանալ: Զեմ ուզեր հակառակ խօսիլ Շահրիկեան Էֆ. ի բայց իրողութիւնը սա է որ խորհրդարանական Յանձնաժողովի այդ նիստին 4 հոգիներկայ էինք (Դաւիթ Էֆ. Տէր Մովսէսեան բաղակայ էր): Շահրիկեան Էֆ. մեզի բացատրութիւններ տուաւ. զիրար համոզեցինք, սկսաւ նիստերուն ներկայ գտնուիլ: Երէկ ալ երբ մեր նիստին հարցուցի թէ՛ Ազգային ժողովին ինչ ըսենք: Զօրապ էֆ. ըսաւ խնդիրը փակուած է արդէն: Այժմ ո՞վ պիտի պատասխանէր հոս ուրեմն: Դաւիթ Էֆ. Տէր Մովսէսեան բացակայ է, ուրեմն ես պատասխանեցի Յանձնախումբին կողմէ:

ԶԱՅՆԵՐ.— Թիւրիմացութիւն է ուրեմն փակելը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն յառաջիկայ նիստը դռնփակ ընենք:

ՎԱՀ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.— Ինչ դռնփակ վարչութիւնը իր ըսելիքը ըսաւ. Յանձնաժողովն ալ ուրիշ ըսելիք չունի: Դիւանը ինքնիրեն չի կրնար դռնփակ ընել նիստը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Լաւ քուէի դնենք:

ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Իսկ եթէ վարչութիւնը բացատրութիւն չիտայ...

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ես պարտաւոր եմ սակայն քուէի դնել խնդիրը:

(14ի դէմ 27 քուէով որոշուեցաւ առաջիկայ նիստը դռնփակ ընել և լսել վարչութեան բացատրութիւնները բարենորոգման խնդրի մասին):

ՕՐԱԿԱՐԳ

ՆԱԽԱԳԻԾ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ
Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախ պիտի կարդացուի Մանկունի Սրբազանին մէկ զիրը այդ մասին:

(Ատենադպիր Էֆ. կարգաց հետեւեալ գիծը):

Ազնուաշուք Ատենապետ Էֆէնտի
Ազգ. երեսփ. Ընդ. Ժողովոյ

Ուրախ եմ որ պատ. Յանձնաժողովը փութացուց Ս. Յակոբեանց վանուց հիմնական կանոնադրի ծրագիրը կամ նախագիծը, թէև շատ անհրաժեշտ էր տեղ տեղ լիջուած ներքին կանոնագիրը եւս մանրամասնած ի միասին տպել և ներկայացնել Երեսփ. ժողովոյ: Դուցէ նախ ուղղութիւնը նուիրադրածել ալ մտադրութեամբ այսպէս վարուած է:

Այս առթիւ կը համառօտեմ կարծիքներս: Ազգ. սահմանադրութեան 17, 18, 19, 20, 21, 22 և 23րդ յօդուածներ. բայց ի ամբաստանութեան պարագայէն, չեն տրամադրեր, և ոչ 1866-7 թուականի ներքին կանոնագրէն սկսեալ, փաստեր կուտան Պատրիարքարանի և Երեսփ. ժողովոյ վանուց ներքին կրօնական և վարչական գործոց միջամտելու իրաւունքը. երեսուցէ մի պատրիարքներու տրուած հրովարտականքը եւս չեն արտօներ: Երեսփ. ժողովոյ իրաւասութեանց վերաբերեալ 60րդ. յօդուածը եւս բացի պատրարքի ընտրութիւնը կատարելը, աւելի արամադրութիւն չունի:

Իսկ գործնականով ցարդ երեւցածը արեւ-

կան ելեւմտից հաշուոց քննութիւնն է, որ յաճախ գործադրուած եւս չէ:

Արդ Երեսփ. ժողով ղեկավարին կացութեան կենթարկուելու երբ միջամտութեան ծայրայեղ առաջարկներ կ'ընդունի, որ աւելաւորականացում կ'առաջնորդէ ինչպէս, նոր դրութիւնը ցոյց կ'ուտայ, Ս. Էջմիածնի զգուած ներկայացուցչութիւնը (պրօքուրէթօրութիւնը) կը հաստատէ, վեղարաւորները տնտեսակ սն խնդրոց խառն աշխարհականաց հետ մասնակցելէ կարգելու, ամսական ուժեր կը սահմանէ, միարանական սեղանը կը ջնջէ, քրիստոնէական միարանից և մայրապետաց համար լուռ կ'անցի, ժառանգաւորաց դպրոցը չիջեր և կարեւորութիւն չտար. անգամ 44 և 45 և 46րդ յօդուածներով ԱՐԳԵԼԻՉ իրաւասութիւն սենի ներկայացուցիչ-պրօքուրէթօր ամէն ժողովոց, Տնօրէնի, միարանականի ևն. որոշմանց և վճռոց դէմ, թէև 43րդ յօդուածով կ'ասէ նաև, որ գործադիր դէր չունի, իսկ արգելիչ դէր ինչ նշանակութիւն կ'ունենայ եւ ո՞րչաի կը տարբերի:

Պատրիարքական իշխանութիւն և Տնօրէն ժողով բոլորովին անուանական կը մնան, բացի Աստուածապետութեան կարգը, թէև 13րդ յօդուածով կը տրամադրէ Պատրիարքին յանդիմանական և պատժական թիթիւ իրաւունք տալ, որ այլ եւ այլ յօդուածոց հետ չհամաձայնիր և հակասական կը դառնայ: Եւ այսպէս ո՞րչաի չփոթութիւնը և հակառակութիւնը առաջ պիտի գան, միշտ վտանգաւոր հետեւանքներով:

Մանաւանդ ինչպէս ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Ս. Հայրապետն Ամենայն Հայոց բացարձակ դիրք ունի, նոյնպէս Երեսփ. ժողով Ս. Յակոբեանց վանքը ցկեանս ընտրուած Պատրիարքը բացարձակ դիրք ունի, և վանական խորհրդոյ չ'ենթարկուի, եւ ոչ ամէն միջամտութիւն կրնայ ներել կրօնական լինի թէ վանական. անտեսական լինի թէ կրթական ևն:

Միթէ Ս. Էջմիածին չարաչար քննադատելի չէ երբ վանական հին կարգ ու սարքը խանգարելով՝ Միարանական սեղանը կը վերցնէ, լիաբուռն ուժեր կուտայ Միաբանից ևն., և չորս կողմ գայթակղութիւնք տարածելով, թէև մինչեւ մի աստիճան նե-

րելի է ուժերի մասը՝ քանի՜ որ մեր ծայրագոյն պաշտօնատեղին է, միարանից կարեւոր մասը զբաղուած է սինոպական ուսուցչական՝ տպարանական ևն. պաշտօններով և չեն կարող սեղան երթալ. բայց կրնային իւրեանց բաժինները բերել տալ:

Իսկ Ս. Երո սաղէմի համար ի սպառ աններելի է միարանական սեղանը ջնջելը, ուժեր կ'ունեն յատկացնելը սկսեալ Պատրիարքէն, որ դարձեալ անբաւական են: Շատ անգամ Միարանք այլ և այլ ուխտատեղիներ և եկեղեցիներ ժամերգութեանց կ'երթան, առաժամ կը վերադառնան, ո՞վ պիտի պատրաստէ սնունդ սնունդը, և պէտք է տունե՞րը յաճախել ուսանին: Հապա քրիստոնէական մայրապետները, ժառանգաւորաց աշակերտները, և ուխտաւորները ո՞ր պիտի կերակրուին. նոցա՞ եւս ուժեր կ'ունեն պիտի սահմանուին, և ո՞ր աղբիւրներէն:

Միարանական սեղանոյ ծախքը սովորաբար 2500—3500ը չ'անցնիր, ժամուց եւ տեղական աւանդական նուէրները 1000 ոսկի հաղիւ կը բռնեն:

Արդ նախագծի 6րդ յօդուածով սահմանուած ամսական 437 ոսկին տարեկան 3264 և 5244 ոսկի կը բռնէ. երբ ներկայացուցչի, աշխարհական նոր պաշտօնեաներու ամսական 20—50 ոսկիէն հաշուելով առ նուազն 10 անձանց համար 1000 ոսկին չի բաւեր: Հապա միւս հասարակ միարանք, մայրապետք, ժառանգաւորաց դպրանոցի աշակերտք, և նոցա սեղանները ինչպէս պիտի լինին, ուսուցիչները, տպարանի մի քանի աշխատաւորք, անտեսականի անդամոց (յօդ. 33) ուժեր կ'ունեն ո՞րքան գումարի կը հասնին: Թող արժանի տուրքը, ներքին և արտաքին ճեղճներու պատճառած ծախքերը ևն. ևն.:

Այսպէսով ուրեմն վանքին տարեկան ծախքը 15—20 հազար ոսկեոյ մէջ պիտի տարուբերի և ժողով պիտի հայթայթուի:

Վանքին տարեկան մուտքը կալուածականով ի միասին 7—10,000 ոսկեոյ հաղիւ կը հասնի՝ եթէ շատ ուխտաւորք մանաւանդ ուսանալիքներէն դան, նուէրներ ևն. լինին, յաջող պայմաններ յաջորդեն:

Տակաւին չեմ յիշեր ուխտաւորաց սեղանները աղքատները, պատրիարքի հայկերոյթ-

ները են: Ընդունուելիք և արտաքսուելիք միաբանից խնդիրները եւս թո՛ղ:

Ապաքէն մինչեւ որ սոսկալի պարտքը չի վճարուի, փանուց ելեւմուտքը չհաւատա կշռուի. որ ամէն տարի 1500—2000 ոսկիէն աւելի բաց ունի, առ այժմ նոր բաներու վրայ մտածելը ներքի չէ:

Սակայն տնտեսական հսկողութիւնը եւ հակակշիռը անհրաժեշտ է, որ և ամէն 6 ամիսը մի քննիչ խրկելով առ առաւելն 100 ոսկի ծախքով, կարելի է կատարել: Կ. Պոլսում կազմուած կամ կազմուելիք յանձնաժողովներ և աստի զրկուելիք հսկողներ դժուար թէ կարողանան գլուխ ելնել բայց տեղական հոգեւոր իշխանութիւնք և պատ-րիարք շատ բան կրնան արդիւնաւորել եթէ խղճամիտ, բանիւրուն և կորովի անձինք լինին: Պետական տեսակէտը ևս ուշ դրութեան պէտք է առնուի:

Դեռ կը թողում շատ յօդուածներ քննադատելը, ինչ որ աւելի դիւրութեամբ կը կատարէի եթէ անձնական տկարութիւնս արգելք չլինէր նախկին գրելու կամ անձամբ գալու:

Սակայն չեմ կարող անոշադիր թողուլ նախագծում գանդառութեան տրուած ժառանգաւորաց դպրանոցի (սէմինար) մասը, դասակարգութիւնը, կրթական ծրագիրը են:

Ինչպէս նաև Կ. Պոլսոյ փոխանորդութեան, Բեթլեհեմի, Ռէմլէի, Եաֆայի, Պէրսէի, Շամի են. տեսչութեանց իսպառութի թողի լինելը զարմանալի է, որոց մէջ կարեւոր խնդիրներ կան և խնայողութեանց շատ պէտք ունին:

Ուսկից ուսած են աւագ-սարկաւազ, աւագ-գպիր (յօդ. 1—2) երբ սարկաւազաց մէջ մէկը աւագ կը լինի, ինչպէս քահանայից մէջ ևս նոյնն է: Գոցէ ձեռնադրութեան Մաշտոցէն կը սխալուին: Իսկ աւագ-գպիր ամենեւին չկրնար լինել բացի դպրապետէ, և Երուսաղէմի դպիրք ժառանգաւորաց աշակերտներն են: Եկամուտ մի քանի ոչ աշակերտ դպրաց համար չարժեք խօսիլ:

Ահաւասիկ առ այժմ այս չափով կ'ամփոփեմ կարծիքներս և դիտողութիւններս: Իցիւ անձամբ ներկայ լինէի:

Ես ոչ Երուսաղէմի միաբան եմ. և ոչ կը ներեմ ինձ միաբան լինիլ, թէեւ երբեմն շատ լախանձանքներ եղան Յարութիւն արքայակ. Պատրիարքէն սկսեալ: Հին կարգ կանոնի՝ նախնական աւանդական սովորութեանց նախանձախդիր լինելու զիս այս խնդրում կը մղէ անտարբեր չմնալ, ինչպէս երբեմն Սոյ խնդրում եւս տարիներով մաքառեցայ սկըգբունքի համար, և ոչ թէ Սոյ կաթողիկոսութեան կուսակից լինելով մաքառեցայ այլ բնութեան բեկման, բնութեաց պետական ցանկի, օսար ներկայացուցչի նախագահութեան են. ևս. դէմ, զոր Ազգ. Սահմանադրութեան հետ մի օր պիտի յուզեմ Երեսփ. Ժողովոյս մէջ՝ եթէ ողջ մնամ: «Անտառին կային մտեր է կոթը մար մէջէն» առակը չի մոռնանք:

Միաբան Ս. Էջմիածնի
Վ.Ա.ՀՐԱՄ ԵՊՍԿ. ՄԱՆԿՈՒՆԻ

Յ. Գ. — Ներուել ինձ յիշել, որ աշխարհակաճ կը կառավարեն Ս. Էջմիածինը, որ Գէորգ Դ. կաթողիկոսի օրէն եկամուտը եւ դրամագլուխը կ'աւելնայ, թէեւ անդ եւս ցեցեր-ճէյօներ պակաս չեն:

Իզմիրցի Յովհաննէս արքեպս. Պատրիարքի օրով աշխարհակաճ կը կառավարէին Երուսաղէմը՝ որ Պատրիարքարան, վարժարան չինել տալէ և կալուածներ աւելցնելէ զատ՝ 8000 ոսկի եւս դրամ թողուց...

Ով որ Եսայի արքեպս.ի պէս պին պօրնա՝ գորգմամ միլիթ սաղ օլտուն ասելով ետեւը առջեւ չի նայիր, անոնցմէ զգուշանալու է: Բայց այս մասին ևս Երեսփոխանական Ժողովի ընտրութիւնը պատասխանատու է: Յիշեմք Երուսաղէմի վերջին տեղապահ ընտրութենէն զարդ անցած դարձածը:

Ազգ. Սահմանադրութեան 21րդ յօդուածով Երեսփ. Ժողով իրաւունք ունէր Պատրիարքի ընտրութիւն կատարելու միաբանութենէն մինչեւ 1 քուէ առած ընդհանուր ցանկի վրայէն. և ոչ թէ Խօքնախում ցանկ պահանջէր, որ աւելորդ է և միաբան. ներքին կանոնադիրը զօրութիւն չունի Ազգային Սահմանադրութեան առջեւ:

Նոյն

ՏՕԻԹ. ԹԵՐԶԵԱՆ ԷՅ — Օրինական դիտողութիւն մը ունիմ. Շատ կարեւոր խնդրի մը կը ձեռնարկենք այժմ. Բայց ամէն խնդիր պէտք է նախաքննիչ Դիւաններու բովէն անցնի: Այս խնդիրն ալ՝ այդպէս պէտք է ըլլայ: Ազգ. Սահմանադրութեան 48րդ յօդուածին համաձայն, «այդպիսի կանոնադիր մը վարչութիւնը պէտք է կազմէ. Երուսաղէմի Միաբանութեան կարծիքը պէտք է առնէ, յետոյ ժողովիս բերէ. այս պայմանները լրացած չեն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Նախ ընդհանուր վիճարանութիւն պիտի ըլլայ Կանոնագրին վրայ:

Դ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՅ. — Այդ վիճարանութիւնը եղաւ, շատ խօսուեցաւ. հիմնական սկզբունքներն ալ ընդունուեցաւ:

Տ. ՀՄԱՅԵԱԿ ԵՊ. — Ես այս կանոնագիրը աւելի յարմար կը գտնեմ առեւտրական ձեռնարկութեան մը քան վանքի մը:

Միաբանը Ազգ. Ժողովէն պէտք է վաւերացուի եղեր. սեղանատան ճաշը վերցուած է: Պատրիարքին միայն 15 ոսկի ամսական որոշուած. 16 դարերու պատրիարք մը պարզ վանահայրի աստիճանին իջեցուած է. Այսօր ունի միաբանները կրնան զեղծարարներ եղած ըլլալ. բայց այդ Աթոռը 16—17 դարերէն ի վեր մնացեր է Շղթայակիրներ գահակալ ունեցեր է: Ինչպէս Շահրիկիան էֆ. լաւ Ըսաւ. վանքը աշխարհականներու ձգելով, պզտիկ աւագակներէ տոնելով մեծ աւագակներուն տուած կ'ըլլանք: Այսօրուան միաբանները անմիաբան են, ես ալ ձեզ հետ եմ. բայց ըսուածին պէս գող աւագակներ չեն: Ամէն միաբան իր ճաշը ինք պիտի պատրաստէ, ծերունի միաբաններ լողանթա՝ պիտի երթան ուրեմն:

Վարդապետ մը 4 ոսկի ամսական պիտի առնէ. սպասաւորներն քանի ոսկի առնէ, եւ դեռ ելեր կ'ըսէք թէ «Նահապետական կարգ»ը պիտի պահուի:

Դ. ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՅ. — Տպագրական սխալ է «նուիրապետական» պիտի ըլլայ:

Տ. ՀՄԱՅԵԱԿ ԵՊԻՍԿ. — Պատրիարքը ինչ իրաւունքներ ունի. երբ մեր ներկայացուցիչը հոն է. Չեմ բեր թէ ներկայացուցիչ չունենանք բայց սահմանափակելը անոր իրաւատու թիւնը: Տ'օրէն ժողովի մասին դրուած յօդուածներուն մէջ մոռցուած է Բեթլեհեմի. Յոպպէի և այլ տեսչութիւնները, ըսուած է միայն թէ «Տրնօրէն ժողովը Ս. Տեղեաց հսկողութիւնը կը կատարէ»: Ս. Երուսաղէմը միջազգային միջավայր մըն է. Եւրոպայի առջեւ Հայ ազգը պարծանքով կը ներկայանայ իր պատրիարքութեամբ որուն կարգը և կարեւորութիւնը չկրնար բարձր մնալ այսպիսի կանոններով:

Ամենէն կենսականը մոռցուած է՝ թէ պաշտօնեաները օրինակ՝ մատակարարը, կալուածապետը, գանձապետը, տօմարակալը ինչ ամսաթուակ պիտի ստանան:

Պատրիարքին ամսականը 15 ոսկի է դրուած: Ես 15 տարեկան տղայ էի. հոն էի տեսայ թէ ինչ է Պատրիարքին դերքը. ինչպէս կարելի է այդքան կարեւորութիւն ունեցող պաշտօնի մը գլուխ գտնուողին 15 ոսկի թոշակ յատկացնել: Ասոնք և այս կարգի դիտողութիւններ կ'ընեմ ցոյց տալու համար որ այս կանոնագիրը ունի այնպիսի թերութիւններ որ չկրնար իրագործել մեր բաղկացած բարեկարգութիւնը և կանոնաւորութիւնը վանքին մէջ:

Տ ԵՋՆ. Վ. ՊԱՊԱՆԱՆ. — Երկու Սրբազան երեսփոխանները շատ լաւ արտայայտուեցան: Արդեօք այս օրէնսդիր Ժողովը իրաւունք ունի՞ վերաքննելու վանքին Կանոնագիրը: Բայց ընդունեցինք արդէն որ ներքին կանոնագիրը փոփոխելու է Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն: Իսկ այսօր այս ծրագրով ելեր Սահմանադրութիւնը կը փոխենք: Նկատի առնելու չէ՞ միթէ, Տեարք երեսփոխանք, այս պետական իրաւունքը որ ունին Երուսաղէմի միաբանութիւնը և Պատրիարքը: Ասոնք յարմար կերպով պէտք է հանդէս բերէք. և չդնէք այնպիսի յօդուածներ որոնք չի պատշաճին այդ իրաւունքներուն: Օրինակ աշխարհական պաշտօնեաներ ըսած էք. թիւը չկայ. 7 8 հոգի պիտի ըլլան ասոնք:

Սահմանադրութեան հիմնադրները լաւ նախատեսած են և միաբանութիւնը ազգէն չանջատելու համար՝ բաւած են թէ միաբանութիւնը պարտաւոր է վանքին եկեւմտացոյցը զրկել և մէկ տարուան արտոնութիւն խնդրել գործադրելու զայն: Կը յիշեմ որ անգամ մը ըսի թէ Ս. Երուսաղէմի պարտքը յաբաժուն կերպով կ'աւելնայ, 7 օրը ոսկի պարտք կ'աւելնայ հոն: Տեսարք երեսփոխանք բայց եթէ պիտոճէ ուղէինք. սահման զրաճ ըլլայինք, այդպէս չէր ըլլար: Օրէնքի այս մասը մեր թերացումէն չէ գործադրուած: Պիտոճէն 9000 ոսկի մէջ կը դառնայ. բայց այժմ ամէն բան սուղ է, 10000ը հազիւ կը բաւէ: Ասոր 6000ը ապահովուած է, ուրիմն տարին 5000 ոսկի բաց կ'ունենանք այս ծրագրով, մինչդեռ մեր սրբակրօն Հայրերը կը ջանան պարտքը վերցնել: Ինչպէս Հայաստանի ինդիքը բարձր խնդիր մըն է, նոյնպէս Երուսաղէմի պարտքին հատուցումը բարձր խնդիր մըն է: Յետոյ. լուսարարապետը ցկեանս պաշտօնեայ է աւանդաբար, մինչ այս նոր կանոնագրի մէջ ո'չ:— Աւագ թարգմանը որ պանս եղած է յիշել: Տնօրէն Ժողովի անդամէ միտ'գաւայն մինչդեռ տպարանապետ մը անդամ զրուած է, գեղարուեստական պաշտօնեայ մը հոգեւոր պաշտօնէութեան մէջ, կամ հիւրընկալ մը, որ պարզ օտապաշտի մըն է ինչ գործ ունի բարձր եկեղեցականներու մէջ: Դարպասապետը ինչ է. այդպիսիներ անա տեղ ունին հոն: Վերջապէս հիմնական սխալներ կան այս ծրագրին մէջ:

Գանք աշխարհական պաշտօնեաներուն: Երբ Ս. Երուսաղէմի Առաքելական Մայր Աթոռը Պոլսոյ Պատրիարքութեան հետ միացաւ երջանկայիշատակ Կոլոտ Պատրիարքի տանն, Գրիգոր Պարոնտէրը գնաց վանք եւ տեսաւ որ աշխարհական և կղերական վանքին մէջ իրարու դէմ մրցելով ինչ չարիքներ կը հասցնեն և միակերպ զուտ եկեղեցականներու վարչութեան մը վերածեց զայն, ծրագրին մէջ չէ խորհուած թէ՛ այդ աշխարհականները որ հոն պիտի երթան՝ ընտանիք պիտի ունենան, ո'ւր պիտի նստին իրենց կիներն ու զաւակները:

Ներքին կանոնագիր մը պատրաստուած կամ վերաքննուած ատեն պէտք է Միաբան-

ութեան հաւանութիւն տա՞նուի: Աստուածաճգիր Սուրբ տեղեաց այդ նուիրական պահպանութիւնը եօթը տէրութեան հսկողութեան տակ է և Պատրիարքին պաշտօնին հեղինակութեամբն է որ կը կառավարուի Հայոց մասը: Երբ Պատրիարքը պատարագ և Սրբազան ու հրաշափառ պաշտօնը կը կատարէ, բոլոր օտարները ամենայն ջերմեանովութեամբ անոր Ս. Աջը կը համբուրեն: Մենք պէտք է նախ Պատրիարքը ընտրենք և անոր հետ խորհիմք կանոնագրի մասին: Աշխարհական մարմինը պիտի երթայ...

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսուեցաւ. բաւական է...

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Յանուն Յանձնաժողովին բան մը պիտի ըսեմ. վիճարանութիւնները սխալ հիմի վրայ դրուած են. Յանձնաժողովը պէտք է լուսարանէ. (ընդ միջուկ). Կը ցաւիմ որ չենք յարգեր օրէնքը — Յանձնաժողովին տեղեկարբերը ու է ատեն կրնայ խօսիլ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց երբ դուք Ատենապետ էիք կը պնդէիք որ տեղեկարբերները ամէնէն վերջ պիտի խօսին:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Շատ լաւ, վերջը կը խօսինք:

Ս. ԲԻԻՐԱՏ ԷՖ. — Երուսաղէմի խնդիրը տարիներէ ի վեր Ազգին ուշը գրաւած է. վիթխարի պարտքը մեր ուսերուն վրայ ծանրացած. դարման նկատուած այս նախագիծը ո'չ միայն անբաւարար է, ոչ միայն արմատացած աղէտները մէջտեղէն վերցնելու անհնդունակ է, այլ և աւելի մեծ աղէտներու պատճառ պիտի տայ: Արմատական միջոցներ գիտնալու է: Յանձնաժողովին մէջ կղերական մը իսկ չկար: Այս նախագիծը չի կրնար փրկել վանքը: Մէկ երկու օրինակներով բացատրեմ: — 1701 թուականին Աւետիք Պատրիարքին օրով, ան միջամտեց և յաջողեցաւ ֆերման ձեռք բերել և ըլլալ թէ՛ Պոլսոյ և թէ՛ Երուսաղէմի Պատրիարք:

Ինքը Պոլիս նստեցաւ և «Պապա», «Նազրը», «Վէլքիլ» և այլն անուններով աշխարհական անձեր զրկեց վանքը իր թէ կառավարելու: Անոնց միջոցով վանքին տուրքերը հատեց և հոս բերաւ: Ահա թէ՛ ուրկէ՛ սկսան գոյանալ վանքին պարտքերը: Այդպէս տեւեց մինչեւ 1714 թուականը...

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով). — Պատմականը անցնինք:

Ս. ԲԻԻՐԱՏ ԷՖ. (Շարունակելով). — Ետիկ անցեալի փորձառութենէն գոնէ օգտուելու ենք: Մեր Ժողովը իրաւասու է քօնթրօլ ընելու, բայց իրաւունք չունի վանքին ներքին գործերուն միջամտելու: Վանքին 30000 ոսկի պարտքը ո'վ վճարեց: Երբ կանոնագիրը յօդուած առ յօդուած քննենք, դեռ շատ ըսելիքներ ունի:

Տ. Մ. ԵՊՍ. ՏԵՐՈՒՆԵԱՆ — Այսչափ խօսքերը ինչ նշանակութիւն ունին: Վանքը իր Միաբանութիւնը ունի, որոնք Ս. Տեղիքը պահպանելու պաշտօնն ունին: Նախագիծին մէջ մի բան աչքի կը զարնէ. հոն կ'ըսուի. «Միաբաններէն ամէն մէկը առնուազն երկրորդական կրթութիւն պէտք է ունենայ» Լաւ. ես առիթ ունեցած եմ աչքովս տեսնելու, վեպ տարի հոն կեցած եմ: Ս. Յուրութեան տաճարին մէջ հայ վարդապետը կէս գիշերին պիտի արթննայ, յունաց զանգակը հայ միաբանին քունը կը խանգարէ...

ՍՄ. ԲԻԻՐԱՏ ԷՖ. (Ընդմիջելով). — Պատմական է, ինչո'ւ թոյլ կուտաք Ատենապետ էֆէնտի:

Տ. Մ. ԵՊՍ. ՏԵՐՈՒՆԵԱՆ (Շարունակելով). — Այսօրուան իրողութիւնն է. Յոյներէն ետք իրենք պէտք է ճարպիկ ըլլան տեղերին գրաւելու. այս տեսակ գործերը երկրորդական կրթութիւն ստացող մը կրնայ ընել:

ՆԱԽԱԳԱՀ՝ Տ. Մ. ԱՐԲ. ՕՐՄԱՆԵԱՆ. — Այս Ժողովին շիրքը կը նմանի Պոլսոյ պաշարման թուականին 1443ին Յունաց դիրքին:

Երուսաղէմը ալմ' վտանգի մէջ է. երկու ամիսներէ ի վեր վտանգի ձայնի կուգան. գործերը Էրեսի վրայ են, իսկ մեր պատուար-ժան երեսփոխանները աշխարհի վէճեր կը յարուցանեն որ վեց ամիս ալ կրնայ տեւել: Երբ հոն ո'չ վարչութիւն կայ և ո'չ Պատրիարք կայ, այսօր մենք ելեր ենք անոնց համար կանոնագիր կը շինենք: Նախ տագնապը անցունենք, վանքը խաղաղեցնենք յետոյ ատով զբաղինք: Պատերազմի ատեն կանոնագիր չեն շիներ: Այսօր Երուսաղէմը Միաբանութիւնը զինուած է Պատրիարքարանի դէմ. փոխանակ ատոր անմիջական դարման տանելու՝ ելեր կանոնագիր կը շինենք:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Հետեւողականութիւն ունենանք, Սրբ. Հայր...:

Տ. Մ. ԱՐԲ. ՕՐՄԱՆԵԱՆ. — Պարապ խօսքեր:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Ես յարգանքով կը խօսիմ և կը պատասխանեմ թէ հետեւողական, պէտք է ըլլանք: Կանոնագիր պահանջողը այս Ժողովն էր. Անմիջական պետքերուն համար Ազգ. Ժողովը օրը օրին հարկ եղած հրահանգները առաւ. իրաւ է որ չը գործադրուեցան ատոնք, բայց յանցանքը որո՞ւնն է: Քսան տարի վանքը Միաբանութեան մնաց: Եսայի պատրիարքին օրով ազգը այդ վանքին 45000 ոսկի պարտքը վճարեց: անկէ ետք նոյնքան պարտք մ'ալ գոյացաւ:

Եսայի պատրիարքին ատեն Ազգ. Ժողովը սկզբունք մը որդեգրեց և դրաւ 1860ի Սահմանադրութեան մէջ թէ՛ «կեդրոնը ներկայացուցիչ պէտք է ունենայ վանքին մէջ»: Եսայի պատրիարքը չուգեց համակերպիլ, իրեն ըսուեցաւ. «կամ կ'ուխտես համակերպիլ և կամ քեզ չենք ընտրեր»: Ինչ փոփոխութիւն եղած է հիմայ այս ծրագրով: Օրինակ կ'ըսեն թէ՛ ասով Պատրիարքին ազդեցութիւնը կը կտրուի: Ուրախ ըլլանք որ ան կեդրոնի ներկայացուցիչին ազդեցութեան տակ կը մնայ, մինչ ասկէ տարիներ առաջ պատրիարքը իր ծառաներուն ազդեցութեան ենթարկուած էր:

Տ. ՀՄԱՅՆԱԿ ԵՊՍ. (Ընդմիջելով). — Որ ստեղծված 50 տարի ծառայեց և 90 տարեկան վախճանեցաւ :

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. (Շարունակելով). — Կ'ըսեն թէ եպիսկոպոսներու ամսական քիչ է. բայց հոն հրաշքի երկիր է, հոն ցարդ եպիսկոպոսները տարեկան 2 ոսկի թուղթ ստանալով հաղարատը ոսկիներու հարստութիւն կը դիզեն : Դիտողութիւն կ'ընեն թէ հասարակաց սեղանատան ճաշը վերցուած է կանոնագրին մէջէն : Բայց արդէն ան այժմ գոյութիւն չունի. այժմ ամէն միաբան արդէն իւր ճաշը իր խուցին մէջ կը պատրաստէ փոխանակ վանքին ընդհ. խոհանոցին մէջ պատրաստուելու : Դրամը թող իրենց տրուի, որ ամէն ոք ինքն իրեն համար պատրաստել տայ : Տէրութեան Սրբազան Միաբաններու չարչարանքներէն ճառեց. բայց եթէ չարչարանք ունին ըսելով՝ թողունք որ զեղծումներ գործեն : Ինչպէս պիտի գործադրենք մեր վերհօկողի իրաւունքը : Կրօնական իրաւասութիւնները ամբողջ պահպանած ենք Միաբաններուն համար : միակ սեղմումը զոր ըրած ենք, անտեսականի մէջ է : Եղբակացութիւններ աւելի լիազուածոր նիստի մը մէջ ընենք. ծրագրին մէջ չկայ թէ զուտ աշխարհական պիտի ըլլան պաշտօնեաները, այլ միայն քօնթրօլն է որ Կեդրոնին ձգուած է և կարգադրուած՝ որ պիտոճէին զուրս ու է ծախք չըլլայ : Միեւնոյն ատեն, եթէ ըսած ենք թէ միաբանի մը ընտրութիւնը պէտք է վաւերացուի, պատճառը այն է որ միաբաններու յաւելումը միանգամայն պիտուէր վրայ ազդեցութիւն կ'ընէ :

Տ. Մ. ԱՐԲԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ. — Նոր բաներ կ'ըսէք, որոնք չկան ձեր Կանոնագրին մէջ : Նոր Կանոնագրով միաբանութիւնը ո՛չ միայն Ազգ. Ժողովին՝ այլ վարչութեան հաշիւ պէտք է տայ թէ ո՞վ եկաւ վանքը և ո՞վ գնաց :

Տ. Մ. ԵՊ. ՏԵՐՈՒՆԵԱՆ. — Երբ ակնարկեցի թէ չարչարանք է միաբաններու կեանքը, ըսել ուզեցի թէ երկրորդական

կրթութիւն ունեցողը կ'ընէ՞ այդ տեսակ գործեր :

Տ. ՀՄԱՅՆԱԿ ԱՐԲԵՊ. — Ինչ ամառ կան պիտի ստանան աշխարհական պաշտօնեաները :

Ե. ՊԵՅԱՉՃԵԱՆ ԷՖ. — Այս Ժողովը Ազգին ներկայացուցիչը ըլլալով, իրաւասութիւն ունի վանքին վրայ : Ազգը գայթակղած է այժմ. իր իրաւունքն է կանոնագիր մը չինել : Բայց չենք կրնար զայն տուանք քննելու անմիջապէս քուէարկել : Սակայն միւս կողմէ անմիջական դարձաններու պէտք կայ : Համաձայն եմ Տ. Ե. Թէրզեան էֆ. և Օրմանեան Սրբազանին և կը պնդեմ որ անմիջապէս կարգադրութիւն մը ըլլայ, յաջորդ նիստին իսկ մէկ կզերական և մէկ աշխարհական պատուիրակներ ընտրենք...

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրէն դուրս է այդ, կը չեղիք կոր :

Տ. Մ. ԱՐԲԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ. — Կ'ըսէք որ կանոնագիրն է օրակարգի խնդիրը, բայց ո՛չ. օրակարգի խնդիրը Երուսաղէմի ներկայ վիճակին անմիջական դարձանն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անոր համար ընդհանուր սկզբունքներ ընդունուած են արդէն :

Ե. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Եթէ Երուսաղէմի շահը աչքի առջեւ ունինք, չընենք այսպիսի վիճարանութիւն մը, որուն երբեք տեղի չկայ : Իսկ չըսուեցան հոս հիմա. 18 դարու պատրիարքութիւնն է ըսին, մինչդեռ Ներսէս Պատրիարք արաբական իշխանապետութենէ գնուած պատրիարքութիւնն է ըսած է : Առանց միաբանութեան կարծիք առնուելու կանոնագիր կը չինենք ըսին : Բոլոր այս բաները ստեղծուած իր ժամանակին պէտք էր ըսուէին : Այս Ժողովը ինքը որոշեց է միաբանութեան չարացուցած կանոնագիր պատրաստել, ինքը Յանձնախումբ մը ընտրեց և վճռեց որ ան կանոնագրի նախագիծ մը բերէ : Սկզբունքները ինք որոշեց 1—2 շաբաթ առաջ, և յանձնախումբը իր տեղեկա-

գիրը այդ հիման վրայ բերաւ, ըսելով. «Ահա միջոցները թէ՛ անմիջական դարձանի և և թէ հիմնական բարեկարգութեան» և առաջարկեց երեք ճիւղը բաժնել. վանքին մատակարարութիւնը, ա) Զուտ կրօնական, բ) Զուտ անտեսական և գ) Զուտ ուսումնական : Ատոնք ընդունուեցան քուէարկութեամբ և մանրամասնութիւններն ալ մեզ թողուց որ ծրագրենք, Եւ այժմ կը վերադառնանք առանց :

Տ. ԲԱՐԹՈՂ ՔՀ. — Յանձնաժողովի առաջնութիւնը քանի՞ հոգի կը խօսի : Խօսեցաւ արդէն :

Ե. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Իբր երեսփոխան կը խօսի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ան իբր երեսփոխան խօսք ուղած էր :

Տ. Մ. ԱՐԲ. ՕՐՄԱՆԵԱՆ. — Երկու կերպարանք ունի ուրեմն :

Ե. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ես ազատ եմ թէ իբր երեսփոխան խօսելու և թէ իբր յանձնաժողովի անդամ պաշտպանելու անոր տեսակէտը և իմ մտածածը :

Տ. Մ. ԱՐԲ. ՕՐՄԱՆԵԱՆ. — Աւելի շատ ձեր անձնական տեսակէտը կը պարզէք :

Վ. ԹԵՔԵՆԱՆ ԷՖ. — Ես ալ կրնայի պաշտպանել այդ տեսակէտը, բայց ան աւելի լաւ կը պաշտպանէ :

Ե. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ժողովը եթէ կը համաձայնի, ընդհանուր վիճարանութեան վերջ տանք և սկսինք յօդուած առ յօդուած քննել կանոնագիրը. բայց ի զուր ետ մի դառնաք, եթէ կը սիրէք Երուսաղէմը : Ընդհ. սկզբունքները ընդունուած են արդէն. իսկ եթէ կ'ըսէք թէ Պատրիարքին ամսականը 18 ոսկի քիչ է՝ աւելցուցէք. եթէ 40 միաբան չաւտ է՝ պակսեցուցէք. բայց ժամավաճառ մի ընէք Ժողովը, Երուսաղէմի մասին հոգածութիւնը այդ կերպով չըլլար : Միաբա-

նութիւնը ըմբոստ է և այլն կ'ըսենք ամէնքս ալ. դարձան սահմաններ գծենք ուրեմն : Կ'ըսէք թէ կրթութեամբ միաբան պէտք չէ. երբ այդ յօդուածին հասնինք, այն ատեն ըսէք և յաջորդեցէք զնեւ թէ միաբանները ազգայնապէս է լինին...

Տ. ԵՋՆ. ՎՐԴ. ՊԱՊԱՆԵԱՆ. — Կը բողոքեմ :

Ե. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Հետեւաբար ամփոփելով բաժնի և յարգելով պաշտօնակիցներս կը խնդրեմ որ այս Ժողովին քննութեան ենթարկուած կանոնագրին ծրագիրը, յօդուած առ յօդուած քննութեան ենթարկենք, երկու շաբաթէն ետք սկսինք ատոր և չուտով աւարտենք :

Տ. Մ. ԵՊ. ՏԵՐՈՒՆԵԱՆ. — Ես ազգաբնակչի չըսի, այլ թող երկրորդական կրթութիւն չունենան ըսի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը փակելէ առաջ՝ վերջին խօսք մը կուտամ Սյայոյաճեան էֆէնտիի, որ կարեւոր առաջարկի մը համար խօսք ուղած էր :

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Վիճարանութեան շարունակութիւնը օրակարգին մէջ կը մնայ ուրեմն : Վանքին տաճնապին անմիջական դարձանը ատկէ առաջ պէտք է խորհի : Թող վարչութիւնը և յանձնախումբը խորհրդակցին և դարձան տանին : Տնտեսական մարմինը պէտք է կազմուի մատակարարութեան համար, քանի որ կանոնագրին մէջ արդէն գտնուած այդ մարմիններու գործի ձեւաբանութիւնը համար բաւական է հիմնական տրամադրութեան ընդունուած ըլլալը : Հետեւաբար պէտք է գրուի վարչութեան որ իր իրաւունքին մէջն է նկատուած մարմինները կազմելու և բոլոր համապատասխան միջոցները ձեռք առնելու, վանքի տնտեսական կառավարութիւնը ու կեդր. վարչութեան հսկողութեան իրաւասութիւնները այժմէն գործադրելու համար :

Ե. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Խորհրդակցու-

Թիւնը արդէն կատարուած է: Յանձնաժողովը յանձնարարած է որ Վարչութիւնը սնձերը մասնաւորէ: Վարչութիւնը պատասխանած է որ կանոնագիրը վաւերացուելէ ետք միայն կրնայ ընտրել այդ մարմինը:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Դուք համաձայն եք ատոր:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Իմ անձնական կարծիքս այն է թէ՛ քանի որ հիմնական ըսկզբունքները ընդունուած են, ուրեմն Վարչութիւնը իրաւունք ունի Տնտեսական մարմինը անմիջապէս կազմելու: Անցեալ տարի ալ որոշուած էր այդ: Այժմ երբ մանաւանդ հիմնական սկզբունքները քուէարկուած են արդէն, Վարչութիւնը կրնայ զայն ընտրել: Եթէ ըսենք Վարչութեան թէ գացէք գործեցէք, անոնք կ'ընեն:

Տ. ՄԱՀԱԲ. ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ. —

Պոյսոյ պաշարման պատմութիւնը յիշեցէք:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Այս բացատրութիւններէն յետոյ, կը տեսնենք թէ Յանձնաժողովը մեր վստահութեան ու արժանութիւն տալուն պէտք կը սեանէ: Ուստի կ'առաջարկեմ որ խորհրդարանական Յանձնաժողովը եւ Վարչութիւնը համախորհուրդ, անմիջապէս ղարմաններուն ձեռնարկեն:

ԱՏԵՆՍՊԵՏ ԷՖ. — Այսպէս ձեռքով առաջարկին դէմ խօսք ուզող կայ:

ՁԱՅՆԵՐ. — Ոչ:

ԱՏԵՆՍՊԵՏ ԷՖ. — Ուրեմն այդ իմաստով ի դիւանէ պիտի գրուի պէտք եղածը Վարչութեան:

(Ժողովը փակուեցաւ ժամը 5.30ին):



(Գ. Վիճակ)			Մուտք-գալու, Գուտք-գալուի շուրջ			Մուտք		
69.	Դաւիթ	ԷՖ.	Տէր-Մովսէսեան	106.	Գեղամ	ԷՖ.	Տէր Կարապետեան	
70.	Համբարձում	»	Պոյաճեան	107.			Զմեկածագ—Զարուհեան	
71.	Սարգիս	»	Սուրբ				Տապիլդոն	
72.				108.	Օննիկ	ԷՖ.	Չիքիլ-Սարաֆ	
Կէսիկ-փառա							(Բ. Վիճակ)	
73.	Հմայեակ	ԷՖ.	Յարամեան				Աղբաւար	
74.	Յարութիւն	»	Ճանկիւլեան	109.				
75.	Յակոբ	»	Ուեսիսեան	110.	Մելքոն	ԷՖ.	Բալու	Կիւրճեան
76.	Յակոբ	»	Նշանեան	111.	Աւետիս	ԷՖ.	Տօղլատ	Ճիւղիկեան
77.	Ներսէս	»	Զարաբեան	112.	Վահան	ԷՖ.	Կետարիա	Էսաեան
Սամաթիա Ա. Գեղոյ				113.	Սարգիս	ԷՖ.	Հալէպ—Այնթապ	Գնահեան
78.	Գրիգոր	ԷՖ.	Զօհրապ	114.	Տօրթ. Գրիգոր	ԷՖ.	Նիկիմիդիա	Ճէլալ
79.	Լեւոն	»	Սաթիմեան	115.	Տօրթ. Ներսէս	ԷՖ.	Պաղատա	Թիւլեան
80.	Հակոբ	»	Խօճատարեան	116.	Սերովբէ	ԷՖ.	Սղեւդ	Նորատունկեան
81.	Պարգեւ	»	Փափագեան				(Գ. Վիճակ)	
82.	Լեւոն	»	Սեղբոսեան				Ակն	
83.	Ռուբէն	»	Փափագեան	117.	Ատովմ	ԷՖ.	Երեցեան	
84.				118.	Արթարի	ԷՖ.	Ուրաքիւր	Սարաֆեան
(Ե. Վիճակ)				119.	Սեպուհ	ԷՖ.	Եղեւիա	Իթիւհեան
Գուգիւնեան Կ. Ինասիէ				120.	Լեւոն	ԷՖ.	Զմիւռնիա	Տնտեսեան
85.	Երուանդ	ԷՖ.	Խորասան				Հանրն	
86.	Լեւոն	»	Տէմիսիպաշեան	121.	Տէվլէթ	ԷՖ.	Տատրեան	
87.	Ռուբէն	»	Զարդարեան				Մալաթիա	
88.	Ոսկան	»	Մարտիկ ան	122.				
89.	Կոպեռնիկ	»	Խաչատուրեան	123.	Տիրան	ԷՖ.	Պանքրմա—Պալլիքիւր	Երկանեան
Թօփ-գալու				124.			Վան	
90.								
91.	Երուանդ	ԷՖ.	Ղալաթիա—Պէյֆօլ					
92.	Նշան	ԷՖ.	Նաւլը-գալու					
93.	Տիգրան	»	Գալլապեան					
94.			Մանուէլեան					
Սամաթիա Ալթըմէր								
Սիւսար Ա. Խաչ								
95.	Բարսեղ	ԷՖ.	Աւետիսեան					
96.	Գարեգին	»	Տէմիսիպաշեան					
97.	Յարութիւն	»	Շահրիկեան					
98.	Վարդգէս	»	Սէրէնկիւլեան					
99.	Յակոբ	»	Մինասեան					
Իււմէլի-նիսար. Պոյանը-գիւղ, Ենի-գիւղ								
100.	Արքահամ	ԷՖ.	Տէր-Յակոբեան					
ԴԱՆԱԴԱՆԵՆ ԵՐԵՍՈՓՈՒՆԱՆԻ								
(Ա. Վիճակ)								
101.	Վահան	ԷՖ.	Եղիպետ				(Գ. Վիճակ)	
102.	Յակոբ	ԷՖ.	Եղիպետ	125.	Օննիկ	ԷՖ.	Աղբաւար—Ապոլիս	
103.	Տօրթ. Փաշաեան	ԷՖ.	Պօնճուգեան				Տէրունեան	
104.	Սողոմոն	ԷՖ.	Խարբէրդ	126.	Արիստակէս	ԷՖ.	Անանա	
105.			Կարին	127.	Աղէքսանդր	ԷՖ.	Գասպարեան	
							Բաղէ	
							Փանոսեան	
							Կուսիկ—Ամիսն—Գարա. Հիսար	
				128.	Զարէ	ԷՖ.	Խարապանէա	

	Պետոս	Գաղատիա	
129. Գասպար	էֆ. Նեմցէ Πασαπο	135. Տր. Խաչիկ	էֆ. Պօղոսեան Կօնեա
130.	Տիգրանակէրս	136. Բարթող	էֆ. Զօրեան Երզնկա
131. Տիգրան	էֆ. Նազաշեան Տիւրիկ	137. Գարրիէլ	էֆ. Նորատունկեան Մարաշ — Ջէյրուս
132. Գէորգ	էֆ. Նեմատուրեան (Ե. Վինակ)	138. Սմբատ	էֆ. Բիւրատ Շապին-Գարանիսար
133. Տիգրան	էֆ. Մարտիկեան Բաբերդ	139. Ժագ	էֆ. Սայապալեան Սեբասիա
134. Երուանդ	էֆ. Սրմաբէշիանլըեան	140. Տօրթ. Նազարէթ	էֆ. Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

Ա. Ատենապետ	Գարրիէլ էֆ. Նորատունկեան	Ա. Ատենադպիր	Հմայեակ էֆ. Աբամեանց
Բ. »	Տր. Տաղաւարեան էֆ.	Բ. »	Երուանդ էֆ. Պէյազճեան
Գ. »	Յակոբ էֆ. Պոյաճեան	Գ. »	Աղբերանդը էֆ. Փանոսեան

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
Բ. Արամ էֆ. Հալաճեան
Գ. Արշակ էֆ. Ալոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յակոբ էֆ. Պոյաճեան
Բ. Լեւոն էֆ. Սեդրոսեան
Գ. Հրանտ էֆ. Ասատուր

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

Ա. Պենոն էֆ. Տէյրիմէնճեան
Բ. Վահան Էսայեան
Գ. Թորգոմ Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Եղուարդ էֆ. Շիրինեան
Բ. Խաչիկ Սրվաճեան
Գ. Պարգեւ էֆ. Փափազեան

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Յարութիւն էֆ. Մոստիչեան
Բ. Բարսեղ էֆ. Աւետիսեան
Գ. Նշան էֆ. Գալըպճեան

ԻՐԱԻԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Տ. Մաղարիա Արեպ. Օրմանեան
Բ. Գարեգին էֆ. Տէմիրճիպաշեան
Գ. Մելքոն էֆ. Կիւրճեան

ՆՍԽԱԶԵՌՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Դաւիթ էֆ. Տէր-Մովսէսեան
Բ. Գէորգ էֆ. Մեծատուրեան
Գ. Հայկ էֆ. Խօճասարեան

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ա. Բարթող էֆ. Զօրեան
Բ. Վահան էֆ. Թէքեան
Գ. Ռուբէն էֆ. Զարդարեան

ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԳԻՆ 1 ՂՐՈՒՇ

Սեփականութիւն Ազգ. Սնուկիին, Ազգ. Ժողովոյ ծախուց յատկացեալ
Կը ծախուի յ'Ազգ. Խորհրդարան Ղալաթիոյ